

ՀՀ ԿԱՌԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

20 Հոկտեմբեր 2016, 1086 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՆՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԳՈՒՅՔ ՆԿԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ռ ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև 2010 թվականի նոյեմբերի 30-ին ստորագրված N 817-AM, Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2011 թվականի հունիսի 8-ին ստորագրված N 1390P փոխառության համաձայնագրերով իրականացված «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի շրջանակներում ձեռք բերված՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի կազմից Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ 1,961,947,980 դրամ արժողությամբ օբյեկտների գույքը նպատակային նշանակությամբ օգտագործելու պայմանով նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ապահովել համապատասխան համայնքների հետ սույն որոշման հավելվածում նշված գույքի նվիրաբերության պայմանագրերի կնքումը՝ դրանցում նախատեսելով, որ գույքային իրավունքների պետական գրանցման և հանձնման-ընդունման գործընթացներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքների միջոցների հաշվին:

3. Առաջարկել սույն որոշման հավելվածում նշված համայնքների ղեկավարներին և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը գույքի հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում կնքել գույքի շահագործման պայմանագրեր:

[Հավելված](#)

Կարեն Կարապետյան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հոկտեմբերի 20-ի N 1086 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ

ՀՀ Արագածոտնի մարզի օբյեկտի անվանումը	Կառույցի երկարությունը (գծմ)	Հաշվեկշռային արժեքը (դրամ)
Պայմանագիր՝ RACP/CW/ICB-2013/057		
ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի գազաֆիկացում	11,693	125,823,863
ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք գյուղի գազաֆիկացում	8,340	98,929,919
ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի գյուղի գազաֆիկացում	18,088	181,055,554
ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան գյուղի գազաֆիկացում	9,566	97,816,932
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղի գազաֆիկացում	41,567	779,175,677
ՀՀ Արագածոտնի մարզի Արտենի գյուղի գազաֆիկացում	32,656	543,616,524
ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Փոշտեր, Լուսավորիչ, Ջալալյան թաղամասերի գազաֆիկացում	3,404	48,940,822
Պայմանագիր՝ RACP/CW/ICB-2013/057		
ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի գազաբաշխիչ ցանցի ընդլայնում	4,207	51,071,526
ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտաղեն համայնքի գազաբաշխիչ ցանցի ընդլայնում	2,952	35,517,163
Ընդամենը	132,473	1,961,947,980

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ